

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ
Կ Ա Ր Գ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Ինստիտուտի բակալավրիական կրթության ձևով (առկա, հեռակա) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմավորման, ատեստավորման արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

Ամփոփիչ ատեստավորման նպատակն է պարզել շրջանավարտների պատրաստման մակարդակի համապատասխանությունը բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1282-Ն հրամանը, ինստիտուտի կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

3. Սույն կարգի դրույթները տարածվում են Ինստիտուտի մագիստրատուրայի բոլոր մասնագիտություններով և կրթական ծրագրերով կրթություն ստացող մագիստրանտների վրա:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

4. Ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է բակալավրի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով:

5. Ամփոփիչ ատեստավորումը ներառում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման հետևյալ ձևերը՝

- 1) ամփոփիչ քննություն,
- 2) ավարտական աշխատանքի պաշտպանություն:

6. Ամփոփիչ քննությունների հարցաշարերը և ավարտական աշխատանքի թեմաները կազմում են թողարկող (մասնագիտական) ամբիոնները, որոնք քննարկվում

են ինստիտուտի ֆակուլտետի խորհրդում և հաստատվում են ռետորի հրամանով: Ամփոփիչ քննությունների հարցաշարերը և ավարտական աշխատանքի թեմաները համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ:

7. Բակալավրի ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը հաստատվում են ավարտական ուստարվա առաջին կիսամյակում:

8. Բակալավրի ավարտական աշխատանքները ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ենթակա են գրախոսման, ընդ որում՝ ներքին կամ արտաքին գրախոսի կողմից: Ավարտական աշխատանքների գրախոսման համար հրավիրվում են արտադրության, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների համապատասխան մասնագետները, որոնց կազմը, ամբիոնի վարիչի ներկայացմամբ, հաստատվում է ամբիոնի նիստում:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԸ

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը (նախագահ և անդամներ) կազմավորվում է ըստ որակավորման մակարդակների, յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ, նշանակում է Ինստիտուտի ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող մասնագետներից, ովքեր Ինստիտուտի աշխատողներ չեն և նախորդող երեք տարիների ընթացքում չեն եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Ինստիտուտի ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

12. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի, դպրոցի) ղեկավարը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

13. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Ինստիտուտի ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:

14. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն կարգով և Ինստիտուտի հաստատած ընթացակարգերով և մեթոդական ուղեցույցներով:

15. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

16. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ հաստատում է Ինստիտուտի ռեկտորը, և ավարտական աշխատանքների պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

17. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են բարձրագույն կրթական ծրագրով ուսուցումը և կուտակել են համապատասխան կրեդիտներ: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ (հիմք՝ ֆակուլտետի խորհրդի որոշում) հաստատվում է Ինստիտուտի ռեկտորի հրամանով: Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անցկացվում է ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

18. Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նրան փոխարինողի ներկայությունը պարտադիր է: Ավարտական աշխատանքի պաշտպանությունից առաջ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Ինստիտուտի ռեկտորը:

19. Ավարտական աշխատանքի պաշտպանության ընթացակարգային պահանջների համաձայն՝ ամփոփիչ ատեստավորման ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:

20. Ավարտական աշխատանքի պաշտպանության ընթացակարգը՝

Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անց է կացվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստի ժամանակ կազմի ոչ պակաս, քան 2/3-ի մասնակցությամբ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստից առաջ քարտուղարը բոլոր անդամներին բաժանվում է մագիստրանտների մասին տեղեկությունը, որոնց պաշտպանությունը պլանավորված է տվյալ նիստի համար, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների բլանկերը, տեղեկագրերը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի ներկայացուցիչին է փոխանցում ղեկավարի կարծիքը, գրախոսությունը, որը հանձնաժողովի ներկայացուցիչներին և ներկաներին տեղեկացնում է աշխատանքի թեման, շրջանավարտի ազգանուն, անուն, հայրանունը և ղեկավարի ազգանուն, անուն, հայրանունը, գիտական ղեկավարի կարծիքը:

Շրջանավարտը ներկայացնում է իր ատենաճառը, որը կարող է տևել մինչև 15 րոպե:

Ավարտական աշխատանքի բովանդակությունը ներկայացնելուց հետո շրջանավարտին հարցեր տալու և պատասխանների համար հանձնաժողովի անդամներին համար տրվում է միջև 20 րոպե ժամանակ:

Ընթերցվում է գրախոսությունը (գրախոսի բացակայության դեպքում այն ընթերցում է հանձնաժողովի ներկայացուցիչը),

Շրջանավարտին տրվում է հնարավորություն արձագանքելու գրախոսի դիտողություններին և առաջարկություններին, աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի անդամները տալիս են հարցեր և ստանում մագիստրանտի պատասխանները, կազմակերպվում է մտքերի փոխանակում, որից հետո նախագահը հայտարարում է աշխատանքի պաշտպանության ավարտը:

21. Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ըստ ինստիտուտում ընդունված գնահատման սանդղակի:

Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

22. Հիմք ընդունելով ավարտական աշխատանքի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

23. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 %-ը:

Ավարտական ատեստավորման աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են կրեդիտավարկանշային միավորներով, թվային և տառային համարժեքներով և հայտարարվում են նույն օրը ԱԱՀ նիստերի քաղվածքները պատշաճ կերպով ձևակերպելուց հետո:

Շրջանավարտի ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 100 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորիշիչների.

- ✓ Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը՝ 20 միավոր
- ✓ Աշխատանքի իրականացումը և արդյունքները՝ 30 միավոր
- ✓ Աշխատանքի շարադրումը և ձևավորումը՝ 20 միավոր
- ✓ Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը՝ 30 միավոր:

24. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում: Շրջանավարտի ավարտական աշխատանքի գնահատականը որոշվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով.

25. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները արձանագրվում են քարտուղարի կողմից: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները:

26. Ավարտական աշխատանքի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված շրջանավարտին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ հաստատության սահմանած կարգով և ժամկետներում: Ավարտական աշխատանքի վերահանձնումն իրականացվում է համաձայն ինստիտուտի սահմանած ընթացակարգի:

27. Հարգելի պատճառներով ավարտական աշխատանքները չպաշտպանած անձանց (փաստաթղթով հաստատված բժշկական վկայություններ կամ այլ բացառիկ դեպքեր) հնարավորություն է տրվում մագիստրոսական թեզի պաշտպանելու: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հավելյալ նիստերը կազմակերպվում են ինստիտուտի կողմից սահմանված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան հարգելի պատճառներով ավարտական աշխատանքները չպաշտպանած անձի կողմից դիմում ներկայացնելուց հետո՝ հանձնաժողովի գործունեության հրամանագրված ժամկետներում:

28. Երկու և ավելի հաստատությունների կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի շրջանավարտների համար կարող է կազմակերպվել համատեղ ամփոփիչ ատեստավորում՝ հաստատությունների միջև նախապես փոխհամաձայնեցված և համապատասխան պայմանագրով հաստատագրված ընթացակարգերով՝ պահպանելով սույն կարգի կանոնները:

29. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ քննարկվում է ինստիտուտի գիտական խորհրդում և մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ արված առաջարկությունների հետ միասին ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Վ.ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

30. Շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ:

31. Գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,

Շրջանավարտը կարող է բողոքարկել ավարտական աշխատանքի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում: Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:

Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են բուհի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և հաստատության ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից,

Շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը:

Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել,

Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, Ինստիտուտի վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից:

Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցում է արձանագրությանը:

Գնահատական փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է հատուկ գրառում:

32. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին՝ իր ցանկությամբ տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք, որը տրվում է անվճար, շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Սույն կարգը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N___

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՄ ՄԱԳԻՍՏՈՐՍԱԿԱՆ ԹԵԶԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«___» _____ 20__ թ.

Կայացած նիստի (ժամը _____ ընթացքի մինչև ժամը _____ ընթացքի)
Շրջանավարտ _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ֆակուլտետ և մասնագիտություն)

_____ թեմայով

ավարտական աշխատանքի քննարկման վերաբերյալ
Մասնակցում էին՝
նախագահ _____
անդամներ _____

(յուրաքանչյուր ավարտական աշխատանքի պաշտպանությանը հատկացվում է առանձին թերթ)։

Թեզը կատարվել է _____ ղեկավարությամբ
խորհրդատու(ներ) _____

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը՝

ա) _____ ֆակուլտետի (դեպարտամենտի) ղեկնաւորի 20__
թ. _____ տեղեկանքը շրջանավարտի հանձնած քննությունների,
ստուգարքների և ուսումնական պլանի պահանջների կատարման մասին:

բ) Հաշվարկային-բացատրագիրը _____ էջ _____ :

գ) Թեզի գծագրեր (աղյուսակներ) _____ թերթ:

դ) Ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքը

_____:

ե) Թեզի վերաբերյալ գրախոսականը _____:

զ) Համառոտ եզրակացություն աշխատանքի վերաբերյալ:

Կատարված թեզի մասին (_____ ընթացքի) հաղորդումից հետո, շրջանավարտին տրվել են հետևյալ հարցերը՝

1. _____

(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)

2. _____

(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)

3. _____

(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումը

1. Համարել, որ շրջանավարտ

կատարել և պաշտպանել է ավարտական աշխատանքը « _____ »
գնահատականով:

2. Շնորհել _____ որակավորում

_____ մասնագիտությամբ:

3. Հանձնել դիպլոմ

(գերազանցության)

4. Նշել, որ _____

ԱԱՀ նախագահ _____

(ստորագրություն)

(անուն,

ազգանուն)

ԱԱՀ անդամներ (անուն, ազգանուն)

1. _____ (ստորագրություն)

2. _____ (ստորագրություն)

3. _____ (ստորագրություն)

4. _____ (ստորագրություն)

5. _____ (ստորագրություն)

6. _____ (ստորագրություն)

Քարտուղար, անուն, ազգանուն և պաշտոն _____

_____ (ստորագրություն)

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N____
ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(լրացվում է յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման քննության ժամանակ)

«____» _____ 20__ թ.

կայացած նիստի (ժամը _____ ընդհանուր ամփոփիչ քննություն հանձնելու

մասին _____ առարկայի ամփոփիչ քննություն հանձնելու

(Ֆակուլտետ և մասնագիտություն)

Քննվող շրջանավարտ

(ազգանուն, անուն, հայրանուն)

Հարցեր

1.

2.

3.

4.

Շրջանավարտին տրված հարցերի ընդհանուր բնութագիրը

Ընդունել, որ շրջանավարտը հանձնել է ամփոփիչ քննությունը _____
գնահատականով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքը

Նախագահ՝ _____ (ստորագրություն)

Ամփոփիչ ատեստավորման

1. _____ (ստորագրություն)

հանձնաժողովի անդամներ՝

2. _____ (ստորագրություն)

3. _____ (ստորագրություն)

3. _____ (ստորագրություն)

Քարտուղարի ստորագրությունը _____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N____

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

« ____ » _____ 20__ թ.

Ատեստավորման բոլոր քննությունները հանձնած շրջանավարտներին
որակավորում շնորհելու մասին

Մասնակցությամբ՝

նախագահ _____

անդամներ _____

1. Շրջանավարտ

ազգանուն, անուն, հայրանուն)

հանձնել է ամփոփիչ ավարտական քննություններ հետևյալ գնահատականով՝

1. _____

(քննական առարկայի անվանումը) (հանձնման ամսաթիվը)

(գնահատական)

(հանձնման ամսաթիվը)

2. _____

(քննական առարկայի անվանումը)

(գնահատական)

(հանձնման ամսաթիվը)

3. _____

(քննական առարկայի անվանումը)

(գնահատական)

(հանձնման ամսաթիվը)

Ընդունել, որ շրջանավարտ _____
հանձնել է

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____ մասնագիտության համար
ուսումնական

ծրագրով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննական բոլոր
առարկաները:

_____ -ին շնորհել

_____ որակավորում:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների մասնավոր կարծիքը

Տալ դիպլոմ

(գերազանցության, ոչ գերազանցության)

2. Շրջանավարտ

(ազգանուն, անուն, հայրանուն)

և այլն

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ (ստորագրություն)

ԱԱՀ ԱՆԴԱՄՆԵՐ՝ 1. _____ (ստորագրություն)

2. _____ (ստորագրություն)

3. _____ (ստորագրություն)

4. _____ (ստորագրություն)

Քարտուղարի ստորագրությունը _____

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 20__ թ.

Ամփոփիչ ատեստավորման քննությանը մասնակցած շրջանավարտների թիվը

Քննությունը հանձնած շրջանավարտների ստացած գնահատականները.

«գերազանց» _____

«լավ» _____

«բավարար» _____

«անբավարար» _____

Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականներ _____

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ.

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ **(ստորագրություն)**

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի
 ”_____”, մասնագիտության “_____”, կրթական
 ծրագրի առկա ուսուցման բակալավրիատի (ավարտական աշխատանքների) և
 մագիստրատուրայի (մագիստրոսական թեզի) պաշտպանության ամփոփիչ
 հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ/անդամ (ընդգծել)՝ ազգանուն, անուն, հայրանուն, գիտ.
 աստիճան, կոչում _____

N	Ուսանողի ԱԱՀ	Ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) թեմայի վերնագիրը	Գնահատման գործոնների միավորը			
			I	II	III	IV

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____
 (ստորագրություն)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ՝ _____
 (ստորագրություն)

 (ստորագրություն)

 (ստորագրություն)

Ծանոթություն՝

- I. աշխատանքի բովանդակությունը՝ ____%
- II. աշխատանքի ինքնուրույնության աստիճանը՝ ____%
- III. աշխատանքի ներկայացման որակը՝ ____%
- IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը, ____%